արվեստագետ Տիգրան Տիճկիլյան:

«Էջմիածին» թատրերգությունը գեղարվեստական տեսակետով կխոստանա հաջող մշակութային ձեռնարկ մը ըլլալ շնորհիվ իր երաժշտական ու թատերական ղեկավարներուն և մասնակցող տաղանդավոր արվեստագետներուն։ Ամեն կերպով հանձնարարելի է Մեծագույն Նյու-Յորքի և մոտավոր արվարձաններու հայ հասարակության։

ՎԵՐԺԻՆ ԷՔՍԵՐՃՅԱՆ
(«Լրաբեր», թիվ 42, 1946 թ.)

„ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԿԱՆԹԵՂ"

1946-ի Ազգային Երեսփոխանական Ժողովի գումարման առթիվ, Ուոթըրթաունի Ս. Հակոբ եկեղեցվո հոգաբարձությունը լույս ընծայած է «Լուսաւորչի կանթեղ»-ը խորագրով գեղեցիկ ու պատկերազարդ հատոր մը, հարյուր վաթսուն էջ, որ հայտնապես ծրագրված է ամերիկահայ եկեղեցիներու պատկերավոր պատմությունը հատորի մը տակ հավաքելու մտածումով։

Այս սիրուն հատորը իր էջերուն մեջ կը պարփակե Միացյալ Նահանգներու Հայաստանյայց Առաքելական եկեղեցվո լման պատկերը։ Առաքելական բոլոր հայ եկեղեցիներու, եկեղեցականներու շուրջ համախմբված դպրաց դասերու, տիկնանց. օրիորդաց և երիտասարդաց կազմակերպություններու և եկեղեցիներու երեսփոխաններու նկարները խնամքով փնտռված ու դասավորված են, այդպիսով ամերիկահայ կյանքին ապագա պատմության կարևոր վավերաթուղթ մը հանդիսանալով։

Ամերիկահայ Հայ Առաքելական համայնքի եկեղեցականներեն զատ, հատորին մեջ տրված են նաև Ամենայն Հայոց Վեհափառ Գևորգ Զ Կաթողիկոսի և Կիլիկիո Վեհափառ Գարեգին Ա-ի լուսանկարները, ինչպես նաև լուսանկարները Երուսաղեմի Տ. Կյուրեղ պատրիարքին և Պոլսո պատրիարքական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Արսլանյանի։

Ատոնցմե դուրս կան նաև կարգ մը խմբանկարներ հին ու նոր մեր պատմական եկեղեցականներու, ուր կտեսնվին Թորգոմ արքեպ. Գուշակյան, Սահակ և Բաբգեն կաթողիկոսներ, Շահե արքեպիսկոպոս և այլն։

Կարելի էր անշուշտ, ամերիկահայ ողբացյալ առաջնորդ Դուրյան արքեպիսկոպոսի նկարն ալ զետեղել այս հատորին մեջ, երբ տրված էին նկարները մեր կարգ մը այն եկեղեցականներուն, որ աղերս չունին այս գաղութին եկեղեցական կյանքին հետ։

Կթվի թե, ժամանակի սղությունը, որուն միջոցին լույս տեսավ այս հատորը, կարգ մը նման վրիպումները անխուսափելի պիտի ընեն։ Համենայն դեպս կատարված աշխատանքը և Ուոթրթաունի հոգաբարձության մտածումը ամեն գնահատութենե վեր է։

Ինչպես հատորին սկիզբը դրված «Քանի մը խոսք»-են կիմանանք, այս հատորին մեջ լայն տեղ տրված է, գովելի մտածումով, «Մեր Մայր Հայրենիքի՝ Խորհրդային Հայաստանի քսանհինգ տարվան հերոսական վերելքին» շքեղ երևույթին։

Սովետական Հայաստանի բանաստեղծություններու լայն տեղ տրված է հատորին մեջ։

Լայն տեղ տրված է նաև Սովետական Հայաստանի մասին հետաքրքրական տեղեկություններու։ Հատորին մեջ տպված են նաև Հայաստանի պետական, մշակութային, պատմական ու գիտական մարզերու մեջ ուշագրավ հանդիսացած մարդոց նկարները։

Հայկական հին ճարտարապետական հրաշալիքներու, այժմ ավերակ, ավա՜ղ, արժանի բաժին մը հատկացված է հատորին մեջ։

Հայերեն բնագրով և անգլերեն թարգմանությունով ամբողջությամբ տպված է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Գևորգ Զ-ին անդրանիկ կոնդակը։

Մասնավոր խնամքով զատված են նաև մեր հին բանաստեղծներեն կրոնաշունչ և հայրենաշունչ կարգ մը սիրուն բանաստեղծություններ ալ, որ հատորին ընթերցման մասնավոր հրապույր մը կուտան։

Այստեղ ի դեպ է հիշել թե հատորը խմբագրողն ու դասավորողը եղած է Տք. Հովհաննես Ծովիկյան, որ ալլապես, իր բազմազբաղ կյանքին մեջ, կրցած է այս պատվաբեր գործը, առանձինն ու երկու շաբթվա կարճ ժամանակին մեջ գլուխ հանել։

Մարդ արդարև կհիանա այս իրապես աշխատասեր ու հանրային կյանքին նվիրված մտավորականին ունեցած եռանդին և գործը գլուխ հանելու կարողության վրա։

Այս տողերը գրողին կարծիքով, գրական տեսակետեն մանավանդ արժող ավելի հատոր մըն է Տք. Ծովիկյանի խմբագրությամբ լույս տեսած այս գնահատելի գործը։

Ս. Հ. Թ.
(«Պայքար» թիվ 1507, 1946 թ.)